<<ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ԵՎ ՊԱՐ>> ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններ, շաբաթական 2 ժամ (68 ժամ)

Ուսուցիչ Ա. Պետրոսյան

Բացատրագիր

«Ազգային երգ ու պար» առարկայի նպատակը ազգային արժեհամակարգի ձևավորումն է. ազգային երգն ու պարը կենցաղ վերադարձնելու և ազգային ինքնագիտակցության զարգացումը խթանելու:

<<Ազգային երգ և պար>> առարկայի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով, այն կազմված է հետևյալ բաժիններից:

- Թեմայի անվանումը, ժամաքանակը
- Նպատակը
- Խնդիրները
- Վերջնարդյունքները

Խմբակում ընդգրկված են 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանի աշակերտները: Գնահատումը կիրականացվի ձևավորվող գնահատման գործիքների միջոցով:

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրությունների, հետաքրքրությունների և պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված են ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների զարգացման վրա:

ԹԵՄԱ՝ Ավանդական պարերի և երգերի ընդհանուր ծագումնաբանությունը և տարատեսակները (10 ժամ)	
Նպատակ	Դաստիարակել ազգային, հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված ստեղծագործ մարդ և երկրի քաղաքացի:
Խնդիրներ	Ծանոթացնել ազգային երգերի, երաժշտության, պարերի ու պարերգերի ծագումնաբանությանը և առանձնահատկություններին:
Վերջնարդյունքներ	Կիմանա ինչպես է առաջացել պարը, պարաքայլերի հիմնական եղանակները , փուլերը, տեսակներն ու առանձնահատկությունները:
Բովանդակություն	• Հայ ավանդական պարի զարգացման փուլերը: (1ժամ) • Պարերի կատարման առանձնահատկությունները: (3 ժամ) • Պարերի տարատեսակները, դասակարգումը և կատարման առանձնահատկությունները: (2 ժամ) • Հայ ավանդական երգի ճյուղերը: (2 ժամ) • Հայ ավանդական երգի տեսակները: (2 ժամ)
ԹԵՄԱ՝ Համայնքային ծիսական պարերգեր ՝պարեր և դրանց ուղեկցող երգեր (19 ժամ)	
Նպատակ	Խորացնել գիտելիքները համայնքային պարերի դերի և նշանակության մասին, ծանոթացնել թե որն է ավանդական համայնքը:
Խնդիրներ	Սովորեցնել ամենատարածված համայնքային պարերը և պարգերը: Կարողանալ պարել երգի ուղեկցությամբ:
Վերջնարդյունքներ	Կիմանա պարերգերի և համապատասխան պարերի՝ ըստ նրանց բնորոշ շարժումների և ռիթմերի նկարագրությունը:
Բովանդակություն	• Գյոնդ /Գյովնդ/ (3 ժամ) • Մեր տան իտև (3 ժամ) • Վերվերի (3 ժամ) • Բասեն բարի (3 ժամ) • Էրիշտա (4 ժամ) • Գորանի(3 ժամ)

ԹԵՄԱ՝ Խաղերգեր, հայրենասիրական երգեր (10 ժամ)	
Նպատակ	Սովորեցնել ինչ է խաղերգը, սերմանել սեր դեպի ազգային մշակույթ, սովորեցնել հայրենասիրական և ազգային ազատագրական երգեր:
Խնդիրներ	Ծանոթացնել հայրենասիրական երգերին, արթնացնել հայի անկոտրուն ոգին:
Վերջնարդյունքներ	Կիմանա 19-րդ դարիվերջին և 20-րդ դարի սկզբի ազգային ազատագրական շարժման բովում ստեղծված ու թրծված երգերի նշանակությունը,կտիրապետեն լավագույն տարբերակներին:
Բովանդակություն	• Գացեք տեսեք(1ժամ) • Աղվեսն եկավ(1 ժամ) • Ձայն մը հնչեց(2 ժամ) • Ով որ քաջ է(1 ժամ) • Մենք պետք է կռվենք(1 ժամ) • Առաքել, Մուշեղ(1 ժամ) • Զարթիր, Լաո (2 ժամ) • Զարթիր, Լաո (քայլերգային) (1ժամ)
ԹԵՄԱ՝ Ավանդական հարսանեկական պարեր և պարերգեր (15ժամ)	
Նպատակ	Ծանոթացնել հարսանեկակն պարերին ու պարերգերին:
Խնդիրներ	Սովորեցնել հարսանեկան ծեսերի առանձնահատկությունները, անժնորել դրանց դերը ներկայիս կյանքում:
Վերջնարդյունքներ	Կկարողանան կատարել հարսանեկական ծիսական պարերը, պարերգային տարբերակների բառերը կկատարեն մեղեդու նվագակցությամբ:
Բովանդակություն	• Թամզարա պարերգ (4ժամ) • Փափուռի պարերգ (5ժամ) • Շավալի (3ժամ) • Լիկիլի (3ժամ)
ԹԵՄԱ՝ Աշխատանքային երգեր (5ժամ)	
Նպատակ	Սովորեցնել աշխատանքային երգերը, դրանց առանձնահատկությունները և կատարման ժամանակը:Սովորեցնել աշխատանքային երգերի տեսակները և

	սովորեցնել թե ինչ են ներկայացնում տվյալ երգերը:
Խնդիրներ	Պահպանել կայուն ռիթմը, հասկանալ դերն ու նշանակությունը:
Վերջնարդյունքներ	ԿԿարողանան երգել աշխատանքային երգերը, կբացատրեն երգի նշանակությունը, տեղը, ժամանակը և կատարած երգի տարատեսակը:
Բովանդակություն	• Խնոցու երգ (1ժամ) • Հոլ արա, Եզո (2ժամ) • Քաղհան (1ժամ) • Հունձքի երգ (1ժամ)
ԹԵՄԱ՝ Ռազմապարեր (9 ժամ)	
Նպատակ	Սովորեցնել պայքարին նախապատրաստվելու կարևորագույն մշակույթային նմուշների:
Խնդիրներ	Ծանոթանալ հայ իրականության մեջ տեղ զբաղեցրած ռազմապարերին:
Վերջնարդյունքներ	Կտիրապետեն տվյալ պարանմուշներից ամենամատչելիներին:
Բովանդակություն	• Յարխուշտա (3ժամ) • Քերծի (3ժամ) • Կառնո քոչարի (3ժամ)